Ա/Ձ Գարեգին Ղարդաշյանին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 225 լիցենզիան վերաձևակերպելու մասին

2022-05-05

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 72 Ա
05.05.2022

Ա/Ձ Գարեգին Ղարդաշյանին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 225 լիցենզիան վերաձևակերպելու մասին

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «իթ» կետով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի 36-րդ կետով, *հաշվի առնելով այն, որ* Ա/Ձ Գարեգին Ղարդաշյանը 15.04.2022թ. դիմել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ իրեն տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան վերաձևակերպելու միջնորդությամբ, *հիմք ընդունելով* Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (22.04.2022թ. թիվ 17 արձանագրություն)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է .

Վերաձևակերպել Ա/Ձ Գարեգին Ղարդաշյանին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 225 լիցենզիան՝ կապված Գարեգին Ղարդաշյանի անձնագրի տվյալների փոփոխության հետ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

2022 թ. մայիսի 12, ք. Երևան